ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-16/26
N 2.87

ք.Երևան «11» 06 2026թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Վ.Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Մաքս Շին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում,

երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (տիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 997 800 (ինը հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N

---

3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ

---

:

փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը[3]

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները ; ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Վաճառող» |
| ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ | «Մաքս Շին» ՍՊԸ |
| Ի.Գասպարյան 33 | Երևան-Էջմիածին խճ. 12, Պտղունք |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | Բանկ, Ամերիաբանկ ՓԲԸ |
| ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ | Հ/Հ 1570072145860100 |
| ՀՎՀՀ 01216144 | ՀՎՀՀ 04436799 |
| Գլխավոր տնօրեն | Տնօրեն |
| Վ.Չիլինգարյան | [illegible] |
| ստորագրություն | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
№ 2-84 «11» 06 2026թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 44511100/2 | Ձեռքի գործիքներ | Կծակցան(кабельрез)<br>Տեսակը՝ Լար կտրող գործիք<br>Կտրելու հնարավորություն՝ փ60մմ / 400մմ²<br>Նյութ՝ CR-MO<br>Երկարություն՝ 320մմ<br>Կոտրված սրիկով ճռիկային սայր՝ աշխատանքի լարվածությունը նվազեցնելու համար: | հատ | 27600 | 55200 | 2 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 2 | մինչև 2026թ. օգոստոսի 31-ը ներառյալ |
| 3 | 44511100/3 | Ձեռքի գործիքներ | մալուխի կցակցան<br>Տեսակը՝ Լար կտրող գործիք<br>Տրամագիծը՝ առավելագույնը 450 մմ²<br>Նյութը PP՝ ծածկված TPR բռնակով<br>Չափսը՝ 900մմ: | հատ | 33000 | 33000 | 1 | | 1 | |
| 7 | 44511100/12 | Ձեռքի գործիքներ | Անիվով թվային մետր<br>**Թվային մետր անիվով**<br>Գնման առարկա է հանդիսանում թվային չափիչ մետրն՝ անիվով (կորիմետր), նախատեսված հեռավորության պարզ և ճշգրիտ չափման համար:<br>Հիմնական տեխնիկական հատկանիշները.<br>- չափման միջակայքը՝ 0-99999.9 մ,<br>- չափման քայլը՝ ոչ ավել, քան 0.1մ, | հատ | 37200 | 37200 | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - չափման սխալանքը՝ ոչ ավել, քան 0.5%,<br>- չափման սանդղակը՝ մետր,<br>- չափման արդյունքը՝ պետք է պահվի սարքի ներքին հիշողության մեջ,<br>- անիվի տրամագիծը՝ ոչ պակաս, քան 320մմ,<br>- բռնակը պետք է ունենա մատների համար նախատեսված հատուկ խորշեր,<br>- բռնակը՝ տելեսկոպիկ,<br>- էկրանը՝ LED,<br>- սնուցման աղբյուրը՝ 2xAAA/LR03,<br>Լրակազմը պետք է ներառի չափիչ սարքը և պայուսակը:<br>Փաթեթավորումը գործարանային: | | | | | | | |
| 8 | 44511100/13 | Ձեռքի գործիքներ | Անկյունային հղկող մեքենա<br>**Անկյունային հղկող մեքենան (болгарка)**<br>Գնման առարկա է հանդիսանում անկյունային հղկող մեքենան (болгарка):<br>Հիմնական տեխնիկական հատկանիշները.<br>- հզորությունը՝ոչ պակաս, քան 1100 Վատտ,<br>- պտտման արագությունը՝ 5000-12000 պտ/ր,<br>- շարժիչի տեսակը՝ էլեկտրական,<br>- սկավառակի տրամագիծը՝ ոչ պակաս, քան 125 մմ,<br>- առանցքի պարույրի չափը՝ ոչ պակաս, քան M 14,<br>- սնուցումը՝ 220-240 Վ (50/60 Հց),<br>Կոմպլեկտում պետք է առկա լինի ռետինե օժանդակ բռնակ:<br>Փաթեթավորումը գործարանային: | հատ | 42000 | 42000 | 1 | | 1 | |
| 9 | 44511100/14 | Ձեռքի գործիքներ | Մալուխի մամլիչ մեխանիկական<br>Տեսակը՝ Ծայրակալների մեխանիկական մամլիչ/կրիմպեր<br>Սեղման տեսակները՝<br>• Մերկ խողովակային մալուխային ամրակներ<br>• Մեկուսացված խողովակային մալուխային ամրակներ | հատ | 18600 | 18600 | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | • Թևքի և ծայրային մալուխային ամրակներ.<br>• Պտտվող ամրակապային կոնտակտներ (D-Sub)<br>• Տերմինալային մալուխային ամրակներ (բաց խողովակով)<br>• Կոաքսիալ միակցիչներ<br>• Մանրաթելային օպտիկական միակցիչներ<br>• Մոդուլային միակցիչներ RJ45, RJ11, RJ14 և RJ25 ինտերֆեյսների համար | | | | | | | |
| 10 | 44511100/15 | Ձեռքի գործիքներ | Մալուխի մամլիչ հիդրավլիկ<br>Տեսակ՝ Հիդրավլիկ լար սեղմիչ 45կՆ<br>Սեղման միջակայք՝ 4 - 70 մմ² :<br>Սեղման ուժ՝ 45կՆ :<br>Երկարությունը՝ 310 մմ :<br>Սեղման միջակայք՝ 4, 6, 8, 10, 16, 25, 35, 50, 70 մմ²<br>Փաթեթավորված տուփի մեջ: | հատ | 37800 | 37800 | 1 | | 1 | |
| 11 | 44511100/16 | Ձեռքի գործիքներ | Այգեգործական մկրատ<br>Այգեգործական մկրատ՝ նախատեսված այգեգործական աշխատանքների իրականացման ժամանակ ճյուղերի կտրման համար:<br>Բռնակը պետք է պատված լինի չսահող նյութով, իսկ պողպատե կտրող դանակը՝ չժանգոտվող ծածկույթով:<br>Մետաղը՝ SK5<br>Երկարությունը՝ 200մմ-230մմ | հատ | 9600 | 9600 | 1 | | 1 | |
| 12 | 44511100/17 | Ձեռքի գործիքներ | Արտադրանքի տեսակը՝ Մեխանիկական<br>Կծկման լայնական հատույթը՝ 6-50 մմ²<br>Սեղմման տերմինալի տեսակը՝ ոչ մեկուսացված,<br>Կծկման լայնական հատույթի պրոֆիլը՝ վեցանկյուն, | հատ | 24000 | 24000 | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ներառված մամլիչները՝ 6, 10, 16, 25, 35, 50 մմ² | | | | | | | |
| 13 | 44511100/18 | Ձեռքի գործիքներ | Բացովի բանալի 0-32մմ<br>Երկարությունը -200 մմ<br>Առավելագույն բռնում -32մմ<br>Նյութը-ածխածնային պողպատ<br>Բռնակ- երկբաղադրիչ չսահող ծածկույթով<br>Չափերը-208*58*13մմ<br>Քաշը-0,267կգ | հատ | 9000 | 18000 | 2 | | 2 | |
| 14 | 44511200/1 | Ձեռքի սղոցներ | Սղոց՝ նախատեսված փայտ և փայտի հիմքով այլ նյութերի (նրբատախտակ, DSP, MDF) կտրելու համար:<br>Երկարությունը՝ 400մմ-450մմ<br>Կտրիչի չափսը՝ 7TPI կամ 9TPI (ատամի քայլը մեկ դյույմում)<br>Մետաղ՝ SK5<br>Սղոցի բռնակը պետք է պատրաստված լինի երկբաղադրիչ և հարվածակայուն պլաստիկից, իսկ սղոցի մակերեսը պետք է պատված լինի տեֆլոնային ծածկույթով: | հատ | 9600 | 9600 | 1 | | 1 | |
| 15 | 44511210/1 | Ձեռքի սղոցների շեղբեր | Շեղբեր՝ նախատեսված երկաթ կտրող ձեռքի սղոցի համար<br>Երկարությունը - 300 մմ<br>Լայնությունը - 13 մմ<br>Մետաղը՝ HSS<br>Ատամների քայլ՝ 24 TPI (ատամի քայլը մեկ դյույմում) | հատ | 960 | 4800 | 5 | | 5 | |
| 16 | 44511260/1 | Հղկաթուղթ | Հղկաթուղթ 100 համարի<br>100 հատիկավոր հղկաթուղթն օգտագործվում է փայտ, մետաղ, պլաստմասե և այլ մակերեսներ հղկելու համար: Չափսը՝ 0.25 մ x 4 մ: | քմ | 6600 | 6600 | 1 | | 1 | |
| 20 | 44511343/4 | Գայլիկոն | Գայլիկոնների հավաքածու<br>Գայլիկոնները պետք է նախատեսված լինեն համաձուլված և ոչ համաձուլված պողպատների, գունավոր մետաղների, կոշտ պլաստմասսայի և այլ նյութերի հորատման համար:<br>2 մմ, 2.5 մմ, 3 մմ, 3.5 մմ, 4 մմ, 4.5 մմ, 5 մմ | հատ | 45000 | 45000 | 1 | | 1 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տրամագծով գայլիկոններ հավաքածուի մեջ պետք է ընդգրկված լինի յուրաքանչյուրից երեք հատ, իսկ 6 մմ, 7 մմ, 8 մմ, 9 մմ, 10 մմ, 11 մմ, 12 մմ տրամագծով գայլիկոններից՝ յուրաքանչյուրից երկու հատ : Մշակման նյութը՝ մետաղ: Մետաղի նյութը՝ HSS-Co Կցորդի ձևը՝ գլանաձև: | | | | | | | |
| 21 | 44511343/5 | Գայլիկոն | Հորատիչի գայլիկոն՝ (Ударное сверло) Նախատեսված անցքեր հորատելու համար: Տրամագիծը՝ 12 մմ Երկարությունը՝ 250-300 մմ Մշակման նյութը՝ բետոն, բնական և արհեստական քարեր Կցորդի տեսակը՝ SDS-plus: Մետաղի նյութը՝ BK8 կամ HSS-Co | հատ | 9600 | 9600 | 1 | | 1 | |
| 22 | 44511343/6 | Գայլիկոն | Հորատիչի գայլիկոն՝ (Ударное сверло) Նախատեսված անցքեր հորատելու համար: Տրամագիծը՝ 22 մմ Երկարությունը՝ 500-600 մմ Մշակման նյութը՝ բետոն, բնական և արհեստական քարեր Կցորդի տեսակը՝ SDS-plus : Մետաղի նյութը՝ BK8 կամ HSS-Co | հատ | 10800 | 10800 | 1 | | 1 | |
| 23 | 44511343/7 | Գայլիկոն | Կոնաձև գայլիկոնի հավաքացու HSS 4-12մմ, 4-20մմ,4-32մմ Աստիճանավոր հորատման գլխիկների հ ավաքածու Նյութ՝ HSS4341 1 հատ 4-12 մմ, 2 մմ/աստիճան, վեցանկյուն ցողուն 1 հատ 4-20 մմ, 2 մմ/աստիճան, վեցանկյուն ցողուն 1 հատ 4-32 մմ, 2 մմ/աստիճան, վեցանկյուն ցողուն Փաթեթավորված է կրկնակի բլիստերով: | հատ | 11100 | 22200 | 2 | | 2 | |
| 24 | 44511343/8 | Գայլիկոն | Գայլիկոն նախատեսված՝ համաձուլված և ոչ համաձուլված պողպատների, | հատ | 2175 | 87000 | 40 | | 40 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գունավոր մետաղների, կոշտ պլաստմասսայի հորատման համար:<br>Տրամագիծը՝<br>N -6 10 հատ<br>N -8 10 հատ<br>N -10 10 հատ<br>N -12 10 հատ<br>Մետաղի նյութը՝ HSS-Co | | | | | | | |
| 25 | 44511370/1 | Գործիքների հավաքածունե ր | Գնման առարկա է հանդիսանում պտուտակահանների հավաքածու:<br>Հավաքածուն պետք է բաղկացած լինի առնվազն 26 կտորից :<br>Հավաքածուն պետք է իր մեջ ներառի.<br>- 11 հատ տափակ պտուտակահան՝ SL6 x 38 մմ, SL3 x 75 մմ, SL4 x 100 մմ, SL5.5 x 75 մմ, SL5.5 x 100 մմ, SL5.5 x 125 մմ, SL6.5 x 100 մմ, SL6.5 x 125 մմ, SL6.5 x 150 մմ, SL6, 5 x 150 մմ, SL8 x 150 մմ,<br>- 10 հատ խաչաձև պտուտակահան՝ PH2 x 38 մմ, PH0 x 60 մմ, PH0 x 75 մմ, PH1 x 80 մմ, PH1 x 100 մմ, PH1 x 100 մմ, PH2 x 100 մմ, PH2 x 125 մմ, PH2 x 150 մմ, PH3 x 150 մմ,<br>- 5 հատ փոքր պտուտակահաններ՝ S2 x 50 մմ, S3 x 50 մմ, PH000 x 50 մմ, PH00 x 50 մմ, T8 x 50 մմ:<br>Պտուտակահանները պետք է բաղկացած լինեն քրոմ վանադիումային (CrV) պողպատից և չսահող բռնակից:<br>Հավաքածուն պետք է փաթեթավորված լինի պլաստիկ կրիչով:<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 28200 | 28200 | 1 | | 1 | |
| 29 | 44511400/3 | Գործիքների մասեր | Անկյունային հղկող մեքենայի կտրող քար՝ նախատեսված մետաղ կտրելու համար:<br>չափերը՝ 180 x 22.23 x 1.6-2 մմ | հատ | 960 | 4800 | 5 | | 5 | |
| 31 | 44511400/5 | Գործիքների մասեր | Գնման առարկա է հանդիսանում մետաղ կտրող և հղկող սկավառակների հավաքածու՝ նախատեսված 76 մմ (3”) անկյունային հղկող մեքենայի համար:<br>Հավաքածուն պետք է ներառի առնվազն | հատ | 1300 | 7800 | 6 | | 6 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 5 հատ մետաղ կտրող սկավառակ՝ 76×1.2 մմ ×10 մմ և 1 հատ հղկող սկավառակ՝ 76×4.0 մմ ×10 մմ չափերի<br>Սկավառակի տրամագիծը 76 մմ (3")<br>Նստեցման անցք 10 մմ | | | | | | | |
| 32 | 44511700/1 | Հարթաշուրթ | Հարթաշուրթ<br>Երկարությունը -180մմ<br>Նյութը Cr-V<br>Նկարագրություն:<br>Մեկուսիչ հարթաշուրթերը նախատեսվա ծ են մինչև<br>1000Վ փոփոխական հոսանքի պայմանն երում աշխատելու համար: | հատ | 4650 | 18600 | 4 | | 4 | |
| 33 | 44521230/2 | Ամրակներ | Մոնտաժային ամրակների հավաքածու M6<br>Գնման առարկա է հանդիսանում ամրակավման լրակազմը՝ նախատեսված 19'' հեռահաղորդակցության պահարաններում տարբեր սարքավորումների ամրացման համար:<br>Հավաքածուն պետք է ներառի.<br>- պտուտակ՝ M6,<br>- մանեկ՝ (16 մմ),<br>- տափօղակ՝ պլաստիկ, սև (16 մմ):<br>Ապրանքի նյութը՝ պողպատ:<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 327 | 65400 | 200 | | 200 | |
| 34 | 44521240/1 | Անուրներ | Պլաստմասե վզկապներ GPH VPC13/500 (12,6x500մմ)<br>Պլաստմասե վզկապներ GPH VPC13/500 (12,6x500մմ)<br>Պլաստմասե վզկապներ<br>Գույնը՝ սև<br>Չափսը՝ 12.6մմ լայնության և 500մմ երկարության<br>Նյութը՝ նեյլոն 66<br>Աշխատանքային ջերմաստիճանը ՝ -25°C մինչև<br>+80 °C Փաթեթի պարունակությունը՝ 100 հատ:<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 564 | 28200 | 500 | | 500 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | 44521240/2 | Անուրներ | Պլաստմասե վզկապներ GPH VPC3.6/140 (3,6x140մմ)<br>Պլաստմասե վզկապներ<br>Գույնը՝ սև<br>Չափսը՝ 3.6մմ լայնության և 140մմ երկարության<br>Նյութը՝ նեյլոն 66<br>Աշխատանքային ջերմաստիճանը ՝ -25°C մինչև<br>+80 °C, փաթեթի պարունակությունը՝ 100 հատ:<br>Փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 48 | 24000 | 500 | | 500 | |
| 36 | 44521240/3 | Անուրներ | Պլաստմասե վզկապներ GPH VPC4.8/430 (4.86x430մմ)<br>Պլաստմասե վզկապներ<br>Գույնը՝ սև<br>Չափսը՝ 4.8մմ լայնության և 430մմ երկարության<br>Նյութը՝ նեյլոն 66<br>Աշխատանքային ջերմաստիճանը ՝ -25°C մինչև<br>+80 °C, փաթեթի պարունակությունը 100հատ,<br>փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 756 | 37800 | 500 | | 500 | |
| 37 | 44521240/4 | Անուրներ | Պլաստմասե վզկապներ GPH VPC3,6/100 (3.6x100մմ)<br>Պլաստմասե վզկապներ GPH VPC3,6/100 (3.6x100մմ)<br>Պլաստմասե վզկապներ<br>Գույնը՝ սև<br>Չափսը՝ 3.6մմ լայնության և 100մմ երկարության<br>Նյութը՝ նեյլոն 66<br>Աշխատանքային ջերմաստիճանը ՝ -25°C մինչև +80 °C<br>, փաթեթի պարունակությունը 100հատ,<br>փաթեթավորումը՝ գործարանային: | հատ | 276 | 13800 | 500 | | 500 | |
| 38 | 44521240/5 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար: | հատ | 32.66 | 29400 | 900 | | 900 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 4.8մմ<br>- երկարություն՝ 300մմ<br>- գույնը՝ սև<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | | | | | | | |
| 39 | 44521240/6 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 3.6մմ<br>- երկարություն՝ 200մմ<br>- գույնը՝ սև<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | հատ | 28 | 50400 | 1800 | | 1800 | |
| 40 | 44521240/7 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 2.5մմ<br>- երկարություն՝ 100մմ<br>- գույնը՝ սև<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային | հատ | 20 | 12000 | 600 | | 600 | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - արտադրված լինի 2025 թվականից սկսած: | | | | | | | |
| 41 | 44521240/8 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Յատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 4.8մմ<br>- երկարություն՝ 300մմ<br>- գույնը՝ սպիտակ<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | հատ | 33 | 46200 | 1400 | | 1400 | |
| 42 | 44521240/9 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Յատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 3.6մմ<br>- երկարություն՝ 200մմ<br>- գույնը՝ սպիտակ<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | հատ | 27.6 | 36000 | 1300 | | 1300 | |
| 43 | 44521240/10 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Յատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 2.5մմ | հատ | 20 | 12000 | 600 | | 600 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - երկարություն՝ 100մմ<br>- գույնը՝ սպիտակ<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | | | | | | |
| 44 | 44521240/11 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 7.0մմ<br>- երկարություն՝ 400մմ<br>- գույնը՝ սև<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | հատ | 56.25 | 45000 | 800 | | 800 |
| 45 | 44521240/12 | Անուրներ | Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնություն՝ 7.0մմ<br>- երկարություն՝ 400մմ<br>- գույնը՝ սպիտակ<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | հատ | 56 | 33600 | 600 | | 600 |
| 46 | 44521240/13 | Անուրներ | Պլաստիկ ձգիչներ 12,5x500մմ<br>Պլաստիկ ձգիչ՝ նախատեսված մալուխներ ամրակապելու համար:<br>Հատկանիշներ.<br>- նյութը՝ նեյլոն 66 կամ պոլիամիդ | հատ | 112 | 33600 | 300 | | 300 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 6.6(PA66)<br>- շահագործման ջերմաստիճանը՝ -40°C –ից մինչև +85<br>- չափսը.<br>- լայնությունը՝ 12.5մմ<br>- երկարությունը՝ 500մմ<br>- գույնը՝ սև<br>- փաթեթի պարունակությունը՝ 100 հատ<br>- փաթեթավորումը գործարանային<br>- արտադրված լինի 2025 թվականից սկսած: | | | | | | | |

1. Պարտադիր պայման է հանդիսանում մատակարարվող ապրանքների չօգտագործված լինելը:

2. Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի ; մատակարարման ժամկետների պահպանման համար:

3. Ապրանքների ընդունման ընթացքում անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում, մինչ հանձնման-ընդունման արձանագրություն ստորագրելը, Պատվիրատուն Մատակարարին ծանուցում է հայտնաբերված անհամապատասխանությունների մասին, որից հետո Մատակարարը 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է վերացնել անհամապատասխանությունները:

4. Մատակարարվող ապրանքները Պատվիրատուին պետք է հանձնվեն գործարանային փաթեթավորումով՝ ապրանքների անվտանգությունն ու պաշտպանվածությունն ապահովելու նպատակով:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ<br>ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕՉ<br>Ի.Գասպարյան 33<br>Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ<br>ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ<br>ՀՎՀՀ 01216144<br>Գլխավոր տնօրեն<br>____________ Կ.Չիլինգարյան<br>ստորագրություն<br>Կ.Տ. | «Վաճառող»<br>«Մաքս Շին» ՍՊԸ<br>Երևան-Էջմիածին խճ. 12, Պտղունք<br>Բանկ. Ամերիաբանկ ՓԲԸ<br>Հ/Հ 1570072145860100<br>ՀՎՀՀ 04436799<br>Տնօրեն<br>------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 2
« 11 » 06 2026թ. կնքված
N2.87 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 44511100/2 | Ձեռքի գործիքներ | | | | 55200 | 55200 | 55200 | 55200 | 55200 | 55200 | 55200 |
| 3 | 44511100/3 | Ձեռքի գործիքներ | | | | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 |
| 7 | 44511100/12 | Ձեռքի գործիքներ | | | | 37200 | 37200 | 37200 | 37200 | 37200 | 37200 | 37200 |
| 8 | 44511100/13 | Ձեռքի գործիքներ | | | | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 |
| 9 | 44511100/14 | Ձեռքի գործիքներ | | | | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 |
| 10 | 44511100/15 | Ձեռքի գործիքներ | | | | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 |
| 11 | 44511100/16 | Ձեռքի գործիքներ | | | | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |
| 12 | 44511100/17 | Ձեռքի գործիքներ | | | | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 13 | 44511100/18 | Ձեռքի գործիքներ | | | | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 | 18000 |
| 14 | 44511200/1 | Ձեռքի սղոցներ | | | | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 44511210/1 | Ձեռքի սղոցների շեղբեր | | | | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 16 | 44511260/1 | Հղկաթուղթ | | | | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 | 6600 |
| 20 | 44511343/4 | Գայլիկոն | | | | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 |
| 21 | 44511343/5 | Գայլիկոն | | | | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |
| 22 | 44511343/6 | Գայլիկոն | | | | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 | 10800 |
| 23 | 44511343/7 | Գայլիկոն | | | | 22200 | 22200 | 22200 | 22200 | 22200 | 22200 | 22200 |
| 24 | 44511343/8 | Գայլիկոն | | | | 87000 | 87000 | 87000 | 87000 | 87000 | 87000 | 87000 |
| 25 | 44511370/1 | Գործիքների հավաքածուներ | | | | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 |
| 29 | 44511400/3 | Գործիքների մասեր | | | | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 | 4800 |
| 31 | 44511400/5 | Գործիքների մասեր | | | | 7800 | 7800 | 7800 | 7800 | 7800 | 7800 | 7800 |
| 32 | 44511700/1 | Հարթաշուրթ | | | | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 | 18600 |
| 33 | 44521230/2 | Ամրակներ | | | | 65400 | 65400 | 65400 | 65400 | 65400 | 65400 | 65400 |
| 34 | 44521240/1 | Անուրներ | | | | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 | 28200 |
| 35 | 44521240/2 | Անուրներ | | | | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 | 24000 |
| 36 | 44521240/3 | Անուրներ | | | | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 | 37800 |
| 37 | 44521240/4 | Անուրներ | | | | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 | 13800 |
| 38 | 44521240/5 | Անուրներ | | | | 29400 | 29400 | 29400 | 29400 | 29400 | 29400 | 29400 |
| 39 | 44521240/6 | Անուրներ | | | | 50400 | 50400 | 50400 | 50400 | 50400 | 50400 | 50400 |
| 40 | 44521240/7 | Անուրներ | | | | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 41 | 44521240/8 | Անուրներ | | | | 46200 | 46200 | 46200 | 46200 | 46200 | 46200 | 46200 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 42 | 44521240/9 | Անուրներ | | | | 36000 | 36000 | 36000 | 36000 | 36000 | 36000 | 36000 |
| 43 | 44521240/10 | Անուրներ | | | | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 44 | 44521240/11 | Անուրներ | | | | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 |
| 45 | 44521240/12 | Անուրներ | | | | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 |
| 46 | 44521240/13 | Անուրներ | | | | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 | 33600 |

**ԳՆՈՐԴ**

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
________ Վ.Չիլինգարյան
ստորագրություն
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«Վաճառող»
«Մաքս Շին» ՍՊԸ
Երևան-Էջմիածին խճ. 12, Պտղունք
Բանկ. Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570072145860100
ՀՎՀՀ 04436799
Տնօրեն
________
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«11» 06 2016թ. կնքված
N 2.87 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ______________________

հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«11» 06 2016թ. կնքված
N2.87 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________________ -ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը — Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________________ -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

Հավելված N 4
« 11 » 06 20.. թ. կնքված
N 2.87 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ___________________________-ի և ________________________-ի միջև «––» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

__________________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.